ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ (ՈԵՇ)

ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ (ՈԵՇ)

Ցկյանս ուսումնառության Որակավորումների Եվրոպական Շրջանակ (ՈԵՇ)

ՈԵՇ-ը ընդհանուր հենքային շրջանակ է, որը կապում է երկրների որակավորումների համակարգերը իրար՝ հանդիսանալով թարգմանչական մի միջոց, որը կարող է դարձնել որակավորումները ավելի ընթեռնելի և հասկանալի Եվրոպայի տարբեր երկրների և համակարգերի համար: Այն ունի երկու սկզբունքային նպատակ՝ օժանդակել քաղաքացիների շարժունությանը տարբեր երկրների միջև և հեշտացնել նրանց ցկյանս ուսումնառությունը:

Առաջարկությունը պաշտոնապես ուժի մեջ մտավ 2008թ. ապրիլին: Այն սահմանում է 2010թ. երկրների համար որպես առաջարկվող թիրախային ժամկետ՝ կապակցելու իրենց որակավորումների ազգային համակարգերը ՈԵՇ-ին, իսկ 2012թ.՝ երաշխավորելու, որ որակավորումների անհատական վկայականները ունենան ՈԵՇ-ի համապատասխան մակարդակին հատուկ հենք:

ՈԵՇ-ն իր ութ հենքային մակարդակներով կհամախմբի տարբեր երկրների որակավորումների ազգային համակարգերը և շրջանակները Եվրոպական ընդհանուր հենքի շուրջ: Վերջիններս ընդգրկում են որակավորումների լիարժեք սանդղակը՝ սկսած հիմնական (1 աստիճան, օր.՝ դպրոցի ավարտական վկայականները) աստիճանից մինչև բարձրագույն (8 աստիճան, օր.՝ Դոկտորի կոչումներ) աստիճան: Որպես ցկյանս ուսումնառությանը օժանդակող մի գործիք՝ ՈԵՇ-ը ներառում է ընդհանուր, մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն կրթության և ուսուցման ժամանակ ձեռք բերվող որակավորումների բոլոր մակարդակները: Ի հավելումն՝ շրջանակը առնչվում է նաև նախնական և շարունակական կրթության ու ուսուցման ժամանակ ձեռք բերվող որակավորումների հետ:

Բոլոր ութ հենքային մակարդակները ձևավորվում են ըստ ուսումնառության արդյունքների: ՈԵՇ-ը մշակողները քաջ գիտակցում են, որ Եվրոպայի կրթության և ուսուցման համակարգերը այնքան զանազան են, որ ուսումնառության արդյունքների փոփոխությունը անհրաժեշտ է երկրների և հաստատությունների միջև

համեմատելիությունն ու համագործակցությունը հնարավոր դարձնելու համար:

ՈԵՇ-ում ուսումնառության արդյունքը սահմանվում է որպես ապացույց ուսումնառուի գիտելիքի, ընդունակությունների մասին և ուսումնառության գործընթացն ավարտելուց հետո նրա հնարավորություններն արտահայտելու միջոց: Հետևաբար, ՈԵՇ-ն ավելի շատ շեշտը դնում է ուսումնառության արդյունքների վրա, քան կենտրոնանում է այնպիսի տվյալների վրա, ինչպիսին է օրինակ ուսումնառության տևողությունը: Ուսումնառության արդյունքները հատկորոշվում են երեք կարգերով՝ գիտելիք, հմտություններ և կարողություն: Սա վկայում է, որ որակավորումները, տարբեր համակցություններում, ընդգրկում են ուսումնառության արդյունքների մի լայն շրջանակ՝ ներառյալ տեսական գիտելիքը, գործնական և տեխնիկական հմտություններն ու սոցիալական կարողությունները, որտեղ ուրիշների հետ աշխատելու ունակությունն ունի առանցքային կարևորություն:

Լրացուցիչ տեղեկատվական աղբյուրներ ՈԵՇ-ի ծագման մասին, որտեղի՞ց է առաջացել ՈԵՇ-ը

Որակավորումների Եվրոպական Շրջանակը առաջացել է 2004թ.-ին՝ որակավորումների թափանցիկությունը մեծացնելու նպատակով ընդհանուր հենք ստեղծելու անդամ պետությունների, սոցիալական գործընկերների և այլ շահագրգիռ կողմերի խնդրանքներին ի պատասխան:

Հանձնաժողովը, ՈԵՇ-ի փորձագիտական խմբի աջակցությամբ, մշակեց ուսումնառության արդյունքների վրա հիմնված 8 մակարդակ պարունակող շրջանակի մի ծրագիր, որի նպատակն էր ավելի մատչելի դարձնել որակավորումների թափանցիկությունն ու դյուրատարությունը և օժանդակել ցկյանս ուսումնառությանը: Հանձնաժողովը հրատարակեց սա 2005թ.-ի երկրորդ կեսի ընթացքում ամբողջ Եվրոպայում խորհրդակցություն ծավալելու համար:

Խորհրդակցության պատասխանները վկայեցին, որ Եվրոպական շահագրգիռ անձիք ցուցաբերել են լայնածավալ աջակցություն Հանձնաժողովի առաջարկին, բայց դրանք իրենց հերթին պետք է ստանային որոշ պարզաբանումներ և հստակեցումներ: Ի պատասխան՝ Հանձնաժողովը ուղղում մտցրեց առաջարկի մեջ՝ հաշվի առնելով բոլոր 32 երկրների փորձագետների մուտքային տվյալները, որոնք ներգրավված էին աշխատանքի մեջ

այնքան, որքան Եվրոպական սոցիալական գործընկերները: Վերանայված վերջնական տեքստը Հանձնաժողովը ընդունեց որպես առաջարկ 2006թ.-ի սեպտեմբերի 6-ին: Եվրոպական Կառավարությունը և Խորհուրդը վարեցին արդյունավետ բանակցություններ առաջարկի վերաբերյալ 2007թ. ընթացքում՝ գնալով նրան, որ այն պաշտոնապես ընդունվի ՈԵԾ-ի կողմից 2008թ.-ի փետրվարին:

Ի՞նչ առավելություններ է տալիս ՈԵԾ-ը Եվրոպային

Առաջարկը կսահմանի Եվրոպական ընդհանուր հենք, որը միմյանց կկապի ազգային որակավորումների տարբեր համակարգեր և այսպիսով կհեշտացնի հաղորդակցությունը նրանց միջև: Կստեղծվի որակավորումների անկախ, բայց միևնույն ժամանակ իրար հետ կապակցված և փոխադարձաբար ըմբռնելի համակարգերի ցանց:

Օգտագործելով ուսումնառության արդյունքները որպես ընդհանուր հենք՝ շրջանակը կհեշտացնի որակավորումների համեմատությունը և տեղափոխումը երկրների, համակարգերի և հաստատությունների միջև և, հետևաբար, կհամապատասխանի Եվրոպական, ինչպես նաև ազգային մակարդակով կիրառողների լայն զանգվածին:

Եվրոպական երկրներից շատերը որոշել են մշակել Որակավորումների Ազգային Շրջանակները՝ հետևելով ՈԵԾ-ին: Այս մշակումները կարևոր են՝ երաշխավորելու, որ Եվրոպական մակարդակով համագործակցության գործընթացը լիարժեքորեն հաստատված է ազգային մակարդակով: 2004թ. ի վեր ՈԱԾ-ների արագ մշակումը վկայում է բոլոր մակարդակներում որակավորումների մեծացված թափանցիկության և համեմատականության պահանջի մասին և ցույց է տալիս, որ ՈԵԾ-ը պահող հիմնական սկզբունքները լայն մասշտաբներով են բաշխված:

Երկրների որակավորումների համակարգերի միջև սերտ կապերը կունենան շատ առավելություններ.

- ՈԵԾ-ը կաջակցի <u>ուսումնառուների և աշխատողների ավելի մեծ շարժունությանը:</u> Ուսումնառուների համար ավելի հեշտ կլինի բնութագրել իրենց կարողությունների ամբողջական մակարդակը այլ երկրների գործատուներին: Սա կօգնի գործատուներին ճնակերպել դիմորդների որակավորումները և, հետևապես, աջակցել աշխատաշուկայի շարժունությանը Եվրոպայում: Գործնական մակարդակում, 2010թ. սկսած, բոլոր նոր որակավորումները պետք է ունենան ՈԵԾ-ի համապատասխան մակարդակին

հատուկ հենք: Հետևաբար, ՈԵՇ-ը կհամալրի և կուժեղացնի առկա Եվրոպական շարժունության այնպիսի գործիքները, ինչպիսիք են Europass-ը, Erasmus-ը և ECTS-ը:

- ՈԵՇ-ը պետք է օգնի անհատներին՝ մեծացնելու ցկյանս ուսումնառություն մուտք գործելու և մասնակցելու հնարավորությունը: Սահմանելով ընդհանուր հենակետ՝ ՈԵՇ-ը ցույց կտա, թե ինչպես կարելի է տարբեր դրսևորումների (օրինակ ֆորմալ ուսումնառություն կամ աշխատանք), տարբեր երկրների ուսումնառության արդյունքները միավորել և, այսպիսով, նպաստել կրթություն և ուսուցում ապահովողների միջև ծագող խոչընդոտների կրճատմանը (օրինակ բարձրագույն կրթության ու մասնագիտական կրթության և ուսուցման միջև ծագող խոչընդոտները, որոնք կարող են նաև գործել միմյանցից մեկուսացված): Սա իր հերթին առաջընթաց կգրանցի, որպեսզի ուսումնառուները ստիպված չլինեն կրկնել ուսումնառությունը ևս մեկ անգամ:
- ՈԵՇ-ը կարող է աջակցել անհատներին աշխատանքային գործունեության կամ այլ ոլորտներում մեծ փորձի ձեռքբերման համար՝ հեշտացնելով ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացումը: Կենտրոնացումն ուսումնառության արդյունքների վրա ավելի դյուրին կդարձնի գնահատելը, թե արդյոք այս ձևաչափերում ձեռք բերված ուսումնառության արդյունքները բովանդակային և հենքային առումով համապատասխանում են ֆորմալ որակավորումներին, թե ոչ:
- ՈԵՇ-ը կաջակցի անհատ կիրառողներին, ինչպես նաև կրթություն և ուսուցում ապահովողներին՝ մեծացնելով որակավորումների՝ ազգային համակարգերից դուրս թողնված թափանցիկությունն օրինակ ճյուղերի և բազմազգային ընկերությունների միջոցով: Ուսումնառության արդյունքների վրա հիմնված ընդհանուր հենքային շրջանակի ընդունումը կհեշտացնի համեմատությունը և պետական իրավասու մարմինների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց կողմից ընդունված ավանդական որակավորումների կապակցումը իրար հետ: ՈԵՇ-ը, այսպիսով, կօգնի ճյուղերին և անհատներին օգտվել որակավորումների այս աճող միջազգայանցումից:

ՈԵՇ-ը փառասիրական և հեռանկարային գործիք է, որը ունի ենթատեքստեր կրթության և ուսուցման համակարգերի, աշխատաշուկայի, արդյունաբերության ու առևտրի, ինչպես նաև քաղաքացիների համար:

Հավելյալ տեղեկություն կարելի է գտնել հետևյալ կայքէջում.

http://ec.europa.eu/dgs/education_cu lture/index_en.html

2008թ. ապրիլի 23-ի

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Ցկյանս ուսումնառության Որակավորումների Եվրոպական Շրջանակի հաստատման վերաբերյալ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հաշվի առնելով Եվրոպական Միության հիմնադրման միջազգային պայմանագիրը և, մասնավորապես, Պայմանագրի 149 (4) ու 150 (4) հոդվածները,

Հաշվի առնելով Հանձնաժողովի առաջարկը,

Հաշվի առնելով Եվրոպական Տնտեսական և Սոցիալական Կոմիտեի կարծիքը[1],

Հաշվի առնելով Տարածաշրջանների Կոմիտեի կարծիքը[2],

Գործելով Հռչակագրի Հոդված 251-ում ամրագրված ընթացակարգին համապատասխան[3],

---

1 OJ C 175, 27.7.2007, p. 74.

2 OJ C 146, 30.6.2007, p. 77

3 Եվրոպական Կառավարության կարծիքը 2007թ. հոկտեմբերի 24-ի վերաբերյալ (Պաշտոնական Հանդեսում դեռ չի տպագրվել) և Խորհրդի 2008թ. փետրվարի 14-ի որոշումը

Մինչդեռ.

1) Քաղաքացիների գիտելիքի, հմտությունների և կարողությունների զարգացումն ու ճանաչումը խիստ կարևոր են անհատների զարգացման, մրցունակության, զբաղվածության և համայնքում սոցիալական համախմբվածության համար: Այսպիսի զարգացումը և ճանաչումը պետք է հեշտացնի աշխատողների և ուսումնառուների շարժունությունն ու նպաստի Եվրոպական աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի բավարարմանը: Հետևաբար, բոլորին (ներառյալ անընդունակ մարդկանց)պետք է օժանդակել ցկյանս ուսումնառություն մուտք գործելու, մասնակցելու ու որակավորումները կիրառելու և դրանք ազգային, համայնքային մակարդակներով զարգացնելու համար:
2) 2000թ. Լիսաբոնի Եվրոպական Խորհուրդը հանգեց այն եզրակացության, որ որակավորումների առավել մեծ թափանցիկությունը պետք է լինի այն հիմնական բաղադրիչներից մեկը, որն անհրաժեշտ է համապատասխանեցնելու համայնքի կրթության և ուսուցման համակարգերը հասարակության գիտելիքի պահանջներին: Բացի այդ, 2002թ. Բարսելոնայի Եվրոպական Խորհուրդը առաջարկեց ավելի սերտ համագործակցություն համալսարանական ճյուղում, ինչպես նաև մասնագիտական կրթության ու ուսուցման ոլորտում մեթոդների թափանցիկության ու ճանաչման զարգացում:
3) Խորհրդի 2002թ. հունիսի 27-ի որոշումը ցկյանս ուսումնառության վերաբերյալ[4] հրավիրեց Հանձնաժողովին, սերտորեն համագործակցելով Խորհուրդի և անդամ պետությունների հետ, մշակելու շրջանակ և՛ կրթության, և՛ ուսուցման որակավորումների ճանաչման համար՝ հիմնվելով Բոլոնիայի գործընթացի ձեռքբերումների վրա ու առաջ քաշելով նմանատիպ գործողություն մասնագիտական կրթության ոլորտում:

[4] OJ C 163, 9.7.2002, էջ 1

4) Խորհրդի և Հանձնաժողովի համատեղ զեկույցները «Կրթություն և ուսուցում 2010» աշխատանքային ծրագրի կարիքը:
5) Կոպենհագենյան գործընթացի համատեքստում 2004թ. նոյեմբերի 15-ին Խորհրդի շրջանակներում կայացած հանդիպմանը Խորհրդի և անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների՝ մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում Եվրոպական ընդլայնված համագործակցության հետագա գերակայությունների վերաբերյալ եզրակացություններում առաջնայնություն է տրվում պարզ և ճկուն Որակավորումների Եվրոպական Շրջանակի մշակմանը՝ հիմնվելով թափանցիկության և փոխվստահության վրա, որը պետք է ընդհանուր հիմք հանդիսանա և՛ կրթության, և՛ ուսուցման համար:
6) Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների վավերացումը պետք է իրագործվի ըստ Խորհրդի ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության որոշարկման ու վավերացման Եվրոպական ընդհանուր սկզբունքների վերաբերյալ 2004թ. մայիսի 28-ի եզրակացությունների: իրագործման վերաբերյալ , ընդունված 2004-2006թթ., կարևորում էր Որակավորումների Եվրոպական Շրջանակ մշակելու
7) 2005թ. մարտի և 2006թ. մարտի Բրյուսելի Եվրոպական Խորհուրդը ընդգծեց Որակավորումների Եվրոպական Շրջանակի ընդունման կարևորությունը:
8) Սույն առաջարկը հաշվի է առնում Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2004թ. դեկտեմբերի 15-ի որակավորումների և կարողությունների (Europass)[5] թափանցիկության համար մեկ համայնքային շրջանակի վերաբերյալ No 2241/2004/EC որոշումը և Եվրոպական Կառավարության ու Խորհուրդի 2006թ. դեկտեմբերի 18-ի ցկյանս ուսումնառության առանցքային կարողությունների վերաբերյալ առաջարկը[6]:
9) Սույն առաջարկը համատեղելի է Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի շրջանակի հետ, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացի շրջանակի ներքո 2005թ. մայիսի 19-ին և 20-ին Բերգենում կայացած հանդիպման 45 Եվրոպական երկրների բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կողմից

[5] OJ L 390, 31.12.2004, էջ 6
[6] OJ L 394, 30.12.2006, էջ 10

համաձայնեցված աստիճանների բնութագրիչների հետ:

10) Մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում որակի ապահովման վերաբերյալ Խորհրդի 2004թ. մայիսի 24-ի եզրակացությունները, բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման համար Եվրոպական հետագա համագործակցության վերաբերյալ Եվրոպական Կառավարության և Խորհրդի 2006թ. փետրվարի 15-ի No 2006/143/EC առաջարկը[7] և բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների՝ Բերգենում կայացած հանդիպմանը համաձայնեցված Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքում որակի ապահովման չափորոշիչներն ու ուղենիշները պարունակում են ընդհանուր սկզբունքներ որակի ապահովման համար, որոնք պետք է կարևորեն Որակավորումների Եվրոպական Շրջանակի իրագործումը:

11) Սույն առաջարկը բացասաբար չի ազդի մասնագիտական որակավորումների ճանաչման վերաբերյալԵվրոպական Կառավարության և Խորհրդի 2005թ. սեպտեմբերի 7-ի No 2005/36/EC հրահանգի վրա [8], որը պաշտպանում է և՛ համապատասխան պետական իրավասու մարմնի, և՛ վերաբնակչի իրավունքներն ու պարտավորությունները: Որակավորումների վերաբերյալ Որակավորումների Եվրոպական Շրջանակի մակարդակների հիմքը չպետք է ազդի աշխատաշուկա մուտք գործելու վրա, որտեղ մասնագիտական որակավորումները ճանաչվել են ըստ 2005/36/EC հրահանգի:

12) Սույն առաջարկի նպատակն է ստեղծել ընդհանուր հիմքային շրջանակ, որը կծառայի որպես թարգմանչական մի միջոց որակավորումների տարբեր համակարգերի և նրանց մակարդակների միջև և՛ ընդհանուր, և՛ բարձրագույն կրթության կամ մասնագիտական կրթության ու ուսուցման համար: Սա կապահովի քաղաքացիների որակավորումների թափանցիկությամբ, համեմատելիությամբ և դյուրատարությամբ՝ բխելով անդամ տարբեր պետությունների փորձից: Կրթության և կարիերայի բազմազան ուղիների առումով որակավորումների յուրաքանչյուր մակարդակ տետք է, սկզբունքայնորեն, լինի հասանելի: Բացի այդ, Որակավորումների Եվրոպական

[7] OJ L 64, 4.3.2006, էջ 60

[8] OJ L 255, 30.9.2005, էջ 22, Խորհրդի 2006/100/EC (OJ L 363, 20.12.2006, էջ 141) Հրահանգի կողմից փոփոխված հրահանգ

Շրջանակը պետք է հնարավորություն տա միջազգային ճյուղային կազմակերպություններին՝ կապակցելու իրենց որակավորումների համակարգերը Եվրոպական ընդհանուր հիմքային կետի հետ և, այսպիսով, ցույց տալու սերտ կապ միջազգային ճյուղային կազմակերպությունների որակավորումների և ազգային որակավորումների համակարգերի միջև: Սույն առաջարկը, հետևաբար, նպաստում է ցկյանս ուսումնառությանն աջակցելու մեծ նպատակներին, ինչպես նաև աշխատողների և ուսումնառուների սոցիալական ինտեգրման, շարժունության և զբաղվածության մեծացմանը: Թափանցիկ որակի ապահովման սկզբունքներն ու տեղեկատվության փոխանակումը կաջակցեն դրա իրագործմանը՝ օգնելով ստեղծել փոխվստահություն:

13) Սույն առաջարկը պետք է նպաստի կրթության և ուսուցման համակարգերի, կրթության, ուսուցման ու զբաղվածության փոխհարաբերության արդիականացմանը, ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության միջև կամուրջների ստեղծմանը, ինչպես նաև փորձի միջոցով ձեռք բերվող ուսումնառության արդյունքների վավերացմանը:

14) Սույն առաջարկը չի փոխարինում որակավորումների ազգային համակարգերին և/կամ որակավորումներին կամ սահմանում դրանք: Որակավորումների Եվրոպական Շրջանակը չի սահմանում յուրահատուկ որակավորումներ կամ անհատի կարողություններ, և յուրաքանչյուր որակավորում պետք է հիմք ընդունի Որակավորումների Եվրոպական Շրջանակի համապատասխան մակարդակը՝ ըստ համապատասխան որակավորումների ազգային համակարգերի:

15) Ելնելով իր չպարտավորված էությունից՝ սույն առաջարկը համապատասխանում է օժանդակելիության սկզբունքին՝ աջակցելով անդամ պետությունների գործունեությանը և ընդարձակելով այն, հեշտացնելով հետագա համագործակցությունը նրանց միջև՝ մեծացնելու թափանցիկությունն ու նպաստելու շարժունությանը և ցկյանս ուսումնառությանը:

16) Քանի որ անդամ պետությունները չեն կարող բավարար կերպով հասնել սույն առաջարկի նպատակին (որակավորումների տարբեր համակարգերի և նրանց

մակարդակների միջև թարգմանչական մի միջոց ծառայող ընդհանուր հենքային շրջանակի ստեղծում) ձեռնարկված գործողության ծավալների ու արդյունքների պատճառով, և ավելի նպատակահարմար է դրան հասնել համայնքային մակարդակով, ապա համայնքը կարող է քայլեր ձեռնարկել ըստ պայմանագրի 5-րդ հոդվածում սահմանված օժանդակելիության սկզբունքի: Ըստ հոդվածում սահմանված համեմատականության սկզբունքի՝ սույն առաջարկը նպատակին հասնելու համար անհրաժեշտ ոչինչից վեր չէ:

ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ.

1. կիրառել Որակավորումների Եվրոպական Շրջանակը որպես հիմքային գործիք՝ համեմատելու որակավորումների տարբեր համակարգերի որակավորման մակարդակները ու առաջ քաշելու և՛ ցկյանս ուսումնառությունը, և՛ հավասար հնարավորությունները գիտելիքահեն հասարակությունում, ինչպես նաև ինտեգրվել հետագայում Եվրոպական աշխատաշուկային՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով ազգային կրթական համակարգերի հարուստ բազմազանությունը,
2. կապակցել իրենց որակավորումների ազգային համակարգերը Որակավորումների Եվրոպական Շրջանակին մինչև 2010թ.՝ մասնավորապես թափանցիկ կերպով կցելով իրենց որակավորումների մակարդակները հավելված II-ում սահմանված մակարդակներին և, եթե անհրաժեշտ է, մշակել որակավորումների ազգային շրջանակները ըստ պետական օրենսդրության և փորձի,
3. հստակ քայլեր ձեռնարկել, որպեսզի մինչև 2012թ. իրավասու մարմինների կողմից հաստատված որակավորման բոլոր նոր վկայականները, դիպլոմները և “Europass”-ի փաստաթղթերը պարունակեն Որակավորումների Եվրոպական Շրջանակի համապատասխան մակարդակին հատուկ հստակ հենք՝ ելնելով որակավորումների ազգային համակարգերից,
4. որակավորումները սահմանելիս և նկարագրելիս կիրառել ուսումնառության արդյունքների վրա հիմնված մոտեցում և նպաստել ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության վավերացմանը ըստ 2004թ. մայիսի 28-ի Խորհրդի եզրակացություններում համաձայնեցված Եվրոպական ընդհանուր սկզբունքների՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն քաղաքացիների վրա, որոնք ունեն գործազրկության կամ զբաղվածության վտանգավոր տեսակների հավանականություն, և նրանց այսպիսի մոտեցումը կարող է օգնել՝ մեծացնելու մասնակցությունը ցկյանս ուսումնառությանը և մուտքի հնարավորությունը դեպի աշխատաշուկա,
5. առաջ քաշել և կիրառել հավելված III-ում սահմանված կրթության և

ուսուցման ոլորտում որակի ապահովման սկզբունքները՝ կապակցելով որակավորումների ազգային համակարգերում առկա բարձրագույն կրթության ու մասնագիտական կրթության և ուսուցման որակավորումները Որակավորումների Եվրոպական Շրջանակին,

6. նախագծել անդամ պետությունների որոշակի կառուցվածքների և պահանջների հետ կապակցված ազգային համակարգման կետեր, օժանդակել և, այլ համապատասխան պետական իրավասու մարմինների հետ միասին, հետևել որակավորումների ազգային համակարգերի և Որակավորումների Եվրոպական Շրջանակի միջև կապին վերջինիս որակն ու թափանցիկությունը զարգացնելու նպատակով:

Այդ ազգային համակարգման կետերի խնդիրները պետք է ընդգրկեն.

ա) որակավորումների ազգային համակարգերում առկա որակավորումների մակարդակների կցումը հավելված II-ում նկարագրված Որակավորումների Եվրոպական Շրջանակի մակարդակներին,

բ) որակավորումների ազգային մակարդակները Որակավորումների Եվրոպական Շրջանակին կցելու թափանցիկ մեթոդի կիրառման երաշխավորում մի կողմից համեմատությունը նրանց միջև հեշտացնելու, իսկ մյուս կողմից արդյունքում ունեցած որոշումների հրապարակման ապահովման համար,

գ) շահագրգիռ անձանց տեղեկատվություն և ուղղորդում ստանալու ապահովում այն մասին, թե ինչպես են ազգային որակավորումները կապակցվում Որակավորումների Եվրոպական Շրջանակի հետ որակավորումների ազգային համակարգերի միջոցով,

դ) պետական օրենսդրության և փորձի համաձայն բոլոր համապատասխան շահագրգիռ անձանց, այդ թվում նաև բարձրագույն կրթության ու մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների, սոցիալական գործընկերների, ճյուղերի և փորձագետների՝ որակավորումների համեմատության ու կիրառման գործում մասնակցության խթանում Եվրոպական մակարդակով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒՂՂՈՐԴԵԼ ԴԵՊԻ ՀԵՏԵՎՅԱԼԸ.

1. աջակցել անդամ պետություններին՝ կատարելու վերը նշված առաջադրանքները, իսկ միջազգային ճյուղային կազմակերպություններին՝ կիրառելու սույն առաջադրանքում սահմանված Որակավորումների Եվրոպական Շրջանակի հիմքային մակարդակներն ու սկզբունքները՝ մասնավորապես ընդլայնելով համագործակցությունը, փորձի պատշաճ փոխանակումն ու փորձարկումը (համայնքային ծրագրերի ներքո կամավոր, մանրազնին վերանայման ու թռիչքային ծրագրերի միջոցով՝ տեղեկատվական և խորհրդատվական նյութերը թողարկելով սոցիալական երկխոսության կոմիտեների հետ միասին), ինչպես նաև մշակելով օժանդակող և ուղղորդող նյութեր,
2. մինչև 2009թ. ապրիլի 23-ը ստեղծել անդամ պետությունների ներկայացուցիչներից բաղկացած Որակավորումների Եվրոպական Շրջանակի խորհրդատվական մի խումբ՝ ներառելով Եվրոպական սոցիալական գործընկերներին և այլ շահագրգիռ անձանց, որոնք պատասխանատու են որակավորումների համակարգերը Որակավորումների Եվրոպական Շրջանակի հետ կապակցելու գործընթացի թափանցիկությունն ու կապակցվածությունն ապահովելու համար,
3. անդամ պետությունների հետ համագործակցությամբ և մասնակից շահագրգիռ անձանց հետ խորհրդակցելուց հետո գնահատել սույն առաջարկին ի պատասխան արված գործողությունը՝ ներառյալ խորհրդատվական խմբի գործունեության ծավալներն ու տևողությունը, և մինչև 2013թ. ապրիլի 23-ը զեկուցել Եվրոպական Կառավարությանը և Խորհրդին ապագայի համար ձեռք բերված փորձի և եզրակացությունների մասին՝ ներառյալ (եթե հարկ կա) սույն առաջարկի

հնարավոր վերանայումն ու վերստուգումը,

4. զարգացնել Որակավորումների Եվրոպական Շրջանակի, ինչպես նաև բարձրագույն կրթության ու մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում կրեդիտների փոխանցման և կուտակման առկա կամ հետագա Եվրոպական համակարգերի միջև սերտ կապը, որպեսզի կատարելագործվի քաղաքացիների շարժունությունը և հեշտ լինի ուսումնառության արդյունքների ճանաչումը:

Ստրասբուրգ, 2008թ. ապրիլի 23

Եվրոպական Կառավարության համար

Նախագահ

HANS-GERT PΦTTERING

Խորհրդի համար

Նախագահ

JANEZ LENARČIČ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Սահմանումներ

Առաջարկի նպատակների համար կիրառվող սահմանումները հետևյալն են.

(ա) «որակավորում» նշանակում է գնահատման և վավերացման գործընթացի ֆորմալ արդյունք, որը ձեռք է բերվում, երբ իրավասու մարմինը որոշում է, որ անհատը ստացել է առկա չափորոշիչներին համապատասխան ուսումնառության արդյունքներ,

(բ) «որակավորումների ազգային համակարգ» նշանակում է ուսումնառության և այլ մեխանիզմների ճանաչման հետ կապված անդամ պետությունների գործունեության բոլոր ասպեկտները, որոնք կապակցում են կրթությունն ու ուսուցումը աշխատաշուկային և քաղաքացիական հասարակությանը: Սա ներառում է որակի ապահովման, գնահատման և որակավորումների շնորհման հետ կապված ինստիտուցիոնալ գործողությունների և գործընթացների մշակումն ու իրագործումը: Որակավորումների ազգային համակարգը կարող է բաղկացած լինել մի քանի ենթահամակարգերից և ներառել որակավորումների ազգային շրջանակ,

(գ) «որակավորումների ազգային շրջանակ» նշանակում է որակավորումները դասակարգելու գործիք՝ ըստ ստացած ուսումնառության հատկորոշված մակարդակների համար սահմանված չափանիշների, որը նպատակ ունի ինտեգրել և համակարգել որակավորումների ազգային ենթահամակարգերն ու զարգացնել աշխատաշուկայի և քաղաքացիական հասարակության հետ կապակցված որակավորումների թափանցիկությունը, մուտքի հնարավորությունը, առաջընթացն ու որակը,

(դ) «ճյուղ» նշանակում է իրենց հիմնական տնտեսական գործառույթի, արտադրանքի, ծառայության կամ տեխնոլոգիայի վրա հիմնված մասնագիտական գործունեության խմբավորում,

(ե) «միջազգային ճյուղային կազմակերպություն» նշանակում է ազգային կազմակերպությունների ասոցիացիա՝ ներառյալ, օրինակ, գործատուներն ու մասնագիտական

կազմակերպությունները, որը ներկայացնում է ազգային ճյուղերի շահերը,

(զ) «ուսումնառության արդյունքներ» նշանակում է ապացույց այն մասին, թե ինչ գիտի սովորողը, ինչ է հասկանում և ուսումնառության գործընթացն ավարտելուց հետո ինչ կարող է անել, իսկ դրանք սահմանվում են որպես գիտելիք, հմտություններ և կարողություն,

(է) «գիտելիք» նշանակում է ուսումնառության միջոցով տեղեկատվության յուրացման արդյունք: Գիտելիքը փաստերի, սկզբունքների, տեսությունների և փորձերի գլխավոր մասն է, որը կապված է աշխատանքի կամ ուսումնասիրության ոլորտի հետ: Որակավորումների Եվրոպական Շրջանակի համատեքստում գիտելիքը բնորոշվում է որպես տեսական և/կամ փաստական,

(ը) «հմտություններ» նշանակում է գիտելիքը կիրառելու, առաջադրանքներն ավարտելու ու խնդիրները լուծելու կարողություն: Որակավորումների Եվրոպական Շրջանակի համատեքստում հմտությունները բնորոշվում են որպես իմացական (ներառյալ տրամաբանական, ինտուիտիվ և ստեղծարարական մտածելակերպը) կամ գործնական (ներառյալ ֆիզիկական ճարպկությունն ու մեթոդների, նյութերի, գործիքների կիրառումը),

(թ) «կարողություն» նշանակում է աշխատանքային կամ ուսումնասիրության իրավիճակներում, մասնագիտական և անհատական զարգացման մեջ գիտելիքի, հմտությունների ու անհատական, սոցիալական և/կամ մեթոդաբանական կարողությունների կիրառման ապացուցված ընդունակություն: Որակավորումների Եվրոպական Շրջանակի համատեքստում կարողությունը բնորոշվում է որպես պատասխանատվություն և ինքնավարություն:

ՀԱՎԵԼՎԱԾ II

Որակավորումների Եվրոպական Շրջանակում (ՈԵՇ) մակարդակները սահմանող բնութագրիչները

8 մակարդակներից յուրաքանչյուրը սահմանված է ըստ որակավորումների ցանկացած համակարգի տվյալ մակարդակի որակավորումներին համապատասխան ուսումնառության արդյունքները նախանշող բնութագրիչների ամբողջական շարքի

		Գիտելիք
		ՈԵՇ-ի համտեքստում գիտելիքը բնորոշվում է որպես տեսական և/կամ փաստական:
Մակարդակ 1	Մակարդակ 1-ին համապատասխան ուսումնառության արդյունքներն են	• հիմնական ընդհանուր գիտելիք
Մակարդակ 2	Մակարդակ 2-ին համապատասխան ուսումնառության արդյունքներն են	• աշխատանքային կամ ուսումնասիրության ոլորտի մասին հիմնական փաստացի գիտելիք
Մակարդակ 3	Մակարդակ 3-ին համապատասխան ուսումնառության արդյունքներն են	• աշխատանքային կամ ուսումնասիրության ոլորտում փաստերի, սկզբունքների, առաջընթացների և ընդհանուր հայեցակարգերի մասին գիտելիք
Մակարդակ 4	Մակարդակ 4-ին համապատասխան ուսումնառության արդյունքներն են	• աշխատանքային կամ ուսումնասիրության ոլորտի լայն համատեքստերում փաստացի և տեսական գիտելիք

Մակարդակ 5*	Մակարդակ 5-ին համապատասխան ուսումնառության արդյունքներն են	• աշխատանքային կամ ուսումնասիրության ոլորտի մասին մանրամասն, մասնագիտացված, փաստացի ու տեսական գիտելիք և տեղեկացվածություն այդ գիտելիքի սահմանների մասին
Մակարդակ 6**	Մակարդակ 6-ին համապատասխան ուսումնառության արդյունքներն են	• աշխատանքային կամ ուսումնասիրության ոլորտի մասին բարձրագույն գիտելիք՝ ներառյալ տեսությունների և սկզբունքների քննադատական ըմբռնում
Մակարդակ 7***	Մակարդակ 7-ին համապատասխան ուսումնառության արդյունքներն են	• մասնագիտացված բարձրագույն գիտելիք, որի մի մասը աշխատանքային կամ ուսումնասիրության ոլորտի մասին գիտելիքի առաջնային մասն է՝ որպես հիմք ինքնատիպ մտածողության և/կամ ուսումնասիրության համար • գիտելիքի խնդիրների քննադատական տեղեկացվածություն տվյալ ոլորտի և տարբեր ոլորտների միջև կապող օղակների մասին
Մակարդակ 8****	Մակարդակ 8-ին համապատասխան ուսումնառության արդյունքներն են	• աշխատանքային կամ ուսումնասիրության ոլորտի և տարբեր ոլորտների միջև կապող օղակների մասին բարձրագույն մակարդակի գիտելիք

Հմտություններ	Կարողություն
ՈԵՇ-ի համատեքստում հմտությունները բնորոշվում են որպես իմացական (ներառյալ տրամաբանական, ինտուիտիվ և ստեղծարարական մտածելակերպը) կամ գործնական (ներառյալ ֆիզիկական ճարպկությունն ու մեթոդների, նյութերի, գործիքների կիրառումը):	ՈԵՇ-ի համատեքստում կարողությունը բնորոշվում է որպես պատասխանատվություն և ինքնավարություն:
• պարզ առաջադրանքները կատարելու համար պահանջվող հիմնական հմտություններ	• աշխատանք կամ ուսումնասիրություն անմիջական հսկողությամբ կառուցվածքային համատեքստում
• համապատասխան տեղեկությունը կիրառելու համար պահանջվող հիմնական իմացական և գործնական հմտություններ՝ կատարելու առաջադրանքներ և լուծելու սովորական խնդիրներ՝ կիրառելով պարզ օրենքներ և գործիքներ	• աշխատանք կամ ուսումնասիրություն հսկողությամբ՝ ունենալով որոշակի ինքնուրույնություն
• հիմնական մեթոդները, գործիքները, նյութերը և տեղեկությունն ընտրելու ու կիրառելու միջոցով առաջադրանքները կատարելու և խնդիրները լուծելու համար պահանջվող իմացական և գործնական հմտությունների շարք	• պատասխանատվություն ստանձնել առաջադրանքների ավարտման համար աշխատանքային կամ ուսումնասիրության ոլորտում • համապատասխանեցնել սեփական ռեժիմը խնդիրները լուծելու հանգամանքներին

• աշխատանքային կամ ուսումնասիրության ոլորտում հատուկ խնդիրներին լուծումներ գտնելու համար պահանջվող իմացական և գործնական հմտությունների շարք	• ցուցաբերել ինքնակառավարում աշխատանքային կամ ուսումնասիրության համատեքստերի ցուցումներում, որոնք սովորաբար կանխատեսելի են, բայց փոփոխման ենթակա • ղեկավարել այլ անձանց որոշակի աշխատանքը՝ աշխատանքային կամ ուսումնասիրության գործունեության գնահատման և զարգացման համար պարտականություն ստանձնելով
• վերացական խնդիրներին ստեղծագործական լուծումներ մշակելու համար պահանջվող իմացական և գործնական հմտությունների համապարփակ շարք	• աշխատանքային կամ ուսումնասիրության գործունեությունների համատեքստերում գործելու կառավարում և ղեկավարում, որտեղ կա անկանխատեսելի փոփոխություն • անձի և այլոց վերանայման ու զարգացման իրականացում
• աշխատանքային կամ ուսումնասիրության մասնագիտացված ոլորտում բարդ և անկանխագուշակելի խնդիրները լուծելու համար պահանջվող բարձրագույն հմտություններ, վարպետության և նորարարության ցուցաբերում	• կարողանալ հաղթահարել տեխնիկական կամ մասնագիտական ծրագրերի և նախագծերի բարդությունը՝ ստանձնելով պատասխանատվություն անկանխատեսելի աշխատանքային կամ ուսումնասիրության համատեքստերում որոշում կայացնելու համար • ստանձնել պատասխանատվություն անհատների և խմբերի մասնագիտական զարգացումն իրականացնելու համար

• ուսումնասիրության և/կամ նորարարության համար պահանջվող խնդիրը լուծելու մասնագիտացված հմտություններ՝ նոր գիտելիք և ընթացակարգեր զարգացնելու ու տարբեր ոլորտներից գիտելիքներ քաղելու համար	• հաղթահարել և վերափոխել աշխատանքային կամ ուսումնասիրության համատեքստերը, որոնք բարդ են, անկանխատեսելի և պահանջում են նոր ռազմավարական մոտեցումներ • ստանձնել պատասխանատվություն մասնագիտական գիտելիքին ու փորձին նպաստելու և/կամ խմբերի ռազմավարական գործունեությունը վերանայելու համար
• ուսումնասիրության և/կամ նորարարության ոլորտում վճռական խնդիրները լուծելու, առկա գիտելիքը կամ մասնագիտական փորձը ընդլայնելու և վերասահմանելու համար պահանջվող բարձրագույն ու մասնագիտացված հմտություններ և տեխնիկաներ՝ ներառյալ սինթեզն ու գնահատումը	• ցուցաբերել փաստացի իրավասություն, նորարարություն, ինքնավարություն, խորագիտակ և մասնագիտական ամբողջականություն ու նոր գաղափարների կամ գործընթացների զարգացման մշտական իրականացում աշխատանքային կամ ուսումնասիրության համատեքստերի կենտրոնում՝ ներառյալ հետազոտությունը

Համատեղելիությունը Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի Որակավորումների Շրջանակի հետ

Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի Որակավորումների Շրջանակն աստիճաններին ապահովում է բնութագրիչներով: Յուրաքանչյուր աստիճանի բնութագրիչը առաջարկում է այդ աստիճանի վերջը ներկայացնող որակավորումների հետ կապված կարողությունների և ձեռքբերումների տիպիկ ակնկալիքների ընդհանուր մի դրույթ:

* Բարձրագույն կրթության սեղմ աստիճանի բնութագրիչը (առաջին աստիճանին կից կամ դրա մեջ), մշակված Որակի Համատեղ Նախաձեռնության կողմից՝ որպես Բոլոնիայի գործընթացի մի մաս, համապատասխանում է ՈԵՇ-ի մակարդակ 5 –ի ուսումնառության արդյունքներին:
** Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի Որակավորումների Շրջանակում առաջին աստիճանի բնութագրիչը, համաձայնեցված բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կողմից 2005թ. մայիսին Բոլոնիայի գործընթացի շրջանակում Բերգենում կայացած հանդիպմանը, համապատասխանում է ՈԵՇ-ի մակարդակ 6-ի ուսումնառության արդյունքներին:
*** Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի Որակավորումների Շրջանակում երկրորդ աստիճանի բնութագրիչը, համաձայնեցված բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կողմից 2005թ. մայիսին Բոլոնիայի գործընթացի շրջանակում Բերգենում կայացած հանդիպմանը, համապատասխանում է ՈԵՇ-ի մակարդակ 7-ի ուսումնառության արդյունքներին:
**** Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի Որակավորումների Շրջանակում երրորդ աստիճանի բնութագրիչը, համաձայնեցված բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կողմից 2005թ. մայիսին Բոլոնիայի գործընթացի շրջանակում Բերգենում կայացած հանդիպմանը, համապատասխանում է ՈԵՇ-ի մակարդակ 8-ի ուսումնառության արդյունքներին:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Ընդհանուր Սկզբունքներ Բարձրագույն Կրթության ու Մասնագիտական Կրթության և Ուսուցման ոլորտում Որակի Ապահովման համար Որակավորումների Եվրոպական Շրջանակի համատեքստում

Որակավորումների Եվրոպական Շրջանակն իրագործելիս, որակի ապահովումը, որն անհրաժեշտ է երաշխավորելու համար պատասխանատվությունը և բարձրագույն կրթության ու մասնագիտական կրթության և ուսուցման զարգացումը, պետք է իրականացվի հետևյալ սկզբունքներին համապատասխան.

- Որակի ապահովան քաղաքականությունները և ընթացակարգերը պետք է ներառեն Որակավորումների Եվրոպական Շրջանակի բոլոր մակարդակները:

- Որակի ապահովումը պետք է լինի կրթության և ուսուցման հաստատությունների ներքին կառավարման անբաժանելի մասը:

- Որակի ապահովումը պետք է ներառի հաստատությունների, նրանց ծրագրերի կամ նրանց որակի ապահովման համակարգերի սիստեմատիկ գնահատումը արտաքին մշտադիտարկող մարմինների կամ գործակալությունների միջոցով:

- Որակի ապահովումն իրականացնող արտաքին մշտադիտարկող մարմինները կամ գործակալությունները պետք է ենթակա լինեն սիստեմատիկ վերանայման:

- Որակի ապահովումը պետք է ներառի համատեքստային, մուտքային, գործընթացային և ելքային տվյալներ՝ շեշտը դնելով ելքային տվյալների և ուսումնառության արդյունքների վրա:

- Որակի ապահովման համակարգերը պետք է ներառեն հետևյալ տարրերը.
    - պարզ և համառոտ նպատակներ ու չափորոշիչներ,
    - ուղենիշներ իրագործումն իրականացնելու համար՝ ներառյալ շահագրգիռ կողմի ներգրավումը,
    - համապատասխան ռեսուրսներ,
    - գնահատման կայուն մեթոդներ ինքնագնահատման և արտաքին վերանայման հետ միասին,
    - հետադարձ կապ ունեցող մեխանիզմներ և ընթացակարգեր զարգացման համար,
    - մուտքի լայն հնարավորություն ունեցող գնահատման արդյունքներ:

- Միջազգային, ազգային և տարածաշրջանային մակարդակներով որակի ապահովման նախաձեռնությունները պետք է համակարգված լինեն երաշխավորելու համար վերանայումը, կապակցվածությունը, սիներգիան (համախմբված ուժերը) և համակարգի լայն վերլուծությունը:

- Որակի ապահովումը պետք է լինի զուգահեռ գործընթաց կրթության և ուսուցման մակարդակների ու համակարգերի միջև՝ ներառելով անդամ պետությունների և համայնքի համապատասխան շահագրգիռ բոլոր կողմերին:

- Որակի ապահովումը համայնքային մակարդակով կարող է ապահովել հենքային կետերով գնահատումների և ուսումնառության համար:

Եվրոպական Հանձնաժողով

Ցկյանս Ուսումնառության Որակավորումների Եվրոպական Շրջանակ (ՈԵՇ)

Լյուքսեմբուրգ, Եվրահամայնքի Երկրների Պաշտոնական Հրատարակությունների գրասենյակ, 2008

2008 – 15 էջ – 21 ճ 29,7սմ

ISBN 978-92-79-08474-4
DOI 10.2766/14352

ԻՆՉՊԵՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԵՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր վճարովի հրատարակությունները կարելի է ձեռք բերել ԵՄ գրախանութից (http://bookshop.europa.eu), որտեղ դուք կարող եք պատվիրել վաճառքի գործակալին ցանկացած հրատարակություն ձեր ընտրությամբ: Հրատարակությունների գրախանութը ունի վաճառքի գործակալների համաշխարհային ցանց: Դուք կարող եք ձեռք բերել նրանց կոնտակտների մանրամասները՝ ուղարկելով ֆաքս (352) 29 29-42758 համարին:

Եվրոպական Միության մասին հավելյալ տեղեկություն կարելի է ստանալ հետևյալ ինտերնետային կայքէջից՝ http://europa.eu

Տպագրված է Բելգիայում